

ՅԱՆՎԱՐԻ ԳՈՐԾԱՆԻՍ ԿՈՒՅԵՐ

Հղթայակիր 15 տարիներէ աւելի երուսաղէմէն դուրս չելաւ: Նա քաջալերուած իր անսպառ յաջողութիւններէն կը բազմապատկէր իր աշխատութիւնները: Երուսաղէմի մէջ Հայոց սրբավայրերը շինելէ եւ վերականգնելէ ետքը՝ ուղեց որանոնց իրաւունքներն ալ վերահաստատել տայ կայսերական նոր հրովարտակներով: Այս խնդիրը շատ կարեւոր էր Յունաց ոտնձգութիւններուն առջեւը առնելու համար: Այս պատճառաւ Պոլիս եկաւ:

Հղթայակիր իր իսկ ձեռքով դրած է այս ճամբորդութեան եւ իր Պոլսոյ մէջ անցուցած կեանքին մանրամասն յիշատակարանը, որ ամէն կերպով հետաքրքրական է եւ պատմական մեծ արժէք ունի:

Սիօն ամսագրին Առաջին Տարւան մէջ (1866) պարբերաբար հրատարակուած է այս յիշատակարանը. «Մարտի 1-ին ռեդակցիան Տ. Գրիգորի Հրեայ-իւրի Պարբերութիւն Ս. Արեւոյ»՝ յերեւելէ ի Վ. Պոլիս, խորագրով եւ կարճ յառաջաբանով մը: Թառաջաբանին համեմատ, «ուղեւորութեան պատճառն է Ս. Յակոբայ վանքին սեփականութեան խնդիրը, զոր Յոյնք կրկին անգամ ոտք ելնելով կը ջննային յափշտակել:» Նոյն յիշատակարանին համեմատ Նալեան Յակոբ եպիսկոպոսն է որ երուսաղէմ կը ղրկուի, «որպէս զի թէ գրիգոր Պատրիարքը եւ թէ Ս. Աթոռոյն մէջ գտնուած հրովարտակներուն իսկական օրինակները եւ թէ ծախուց համար հարկաւոր դրամը հետն առնու գայ ի Վ. Պոլիս» (Սիօն 1866, էջ. 123):

Հղթայակիր երբեք չըսեր թէ Նալեան ղրկուած ըլլայ երուսաղէմ զինքը հրաւիրելու համար: Եւ ստուգիւ մենք կը գտնենք Նալեանը, որ Երուսաղէմ, Սահակ եւ Պալատեցի Յակոբ վարդապետներուն հետ Հղթայակիրը գիմաւորելու